ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

15. 02. 2013 թվականի N 25-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի <ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ> N 70- Ն ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

**Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունվարի 10-ի <Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին> N 70-Ն որոշմամբ հաստատված միջոցառումների և գերակա խնդիրների իրականացումն ապահովելու նպատակով**

**Հրամայում եմ**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության ծրագրի /այսուհետ Ծրագիր/ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների ոլորտների միջոցառումների /հավելված N1/ և գերակա խնդիրների /հավելված N2/ վերահսկողների ու կատարողների ցանկը:
2. Սույն հրամանի N1 հավելվածում նշված վերահսկողներին ու կատարողներին՝ սահմանված ժամկետներում ապահովել հաստատված միջոցառումների կատարումը:
3. Սույն հրամանի N2 հավելվածում նշված կատարողներին՝ եռամսյակի ավարտից հետո 2-օրյա ժամկետում, համապատասխան վերահսկողների հետ համաձայնեցված, գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության (ՀՀԷԲՊՆ) աշխատակազմի զարգացման վարչություն:
4. ՀՀԷԲՊՆ աշխատակազմի ղեկավար Կ. Ղահրամանյանին՝ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5-օրյա ժամկետում ապահովել տվյալ եռամսյակում Ծրագրի միջոցառումների իրականացման և գերակա խնդիրների կատարման ընթացքի մասին ամփոփ տեղեկանքի ներկայացումը Հայաստանի Հանրապետության կառավարություն:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը թողնում եմ ինձ:

**ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված N 1

# Ց Ա Ն Կ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Միջոցառման անվանումը | Ակնկալվող արդյունք | Վերահսկողներ | Կատարողներ | Ժամկետը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1/17 «Գազի տնտեսությունում անվտանգության պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ուժը կորցրած կճանաչվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի N 2399-Ն որոշումը, և կսահմանվեն գազի տնտեսությունում անվտանգության նվազագույն պահանջներ՝ մատակարարների և սպառողների համար՝ անկախ սեփականության ձևից: | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | մայիսի 3-րդ տասնօրյակ |
| 2/18 «Հազվագյուտ երկրաբանական մերկացում-ների, հանքաբանական գոյացումների, հնէաբանական օբյեկտների և գիտական ու գիտամշակութային հատուկ արժեք ներկայացնող ընդերքի մյուս տեղամասերի կարգավիճակի և պահպանության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | ՀՀ տարածքում առկա և նոր հայտնաբերված հազվագյուտ երկրաբանական մերկացումների, հանքաբանական գոյացումների, հնէաբանական օբյեկտների ուսումնասի-րության, մոնիթորինգի, պետական հաշ-վառման և պետական կադաստրի վարման, պահպանության իրականացման կարգի սահմանում | Ա. Գալստյան | Ընդերքի վարչություն | հունիսի 3-րդ տասնօրյակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3/19 «Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի հաստատման մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Իրավական ակտի ընդունման արդյունքում կհատկացվեն համապատասխան ֆինանսական միջոցներ՝ Հայկական ԱԷԿ-ի N 2 էներգաբլոկի նախագծային ժամկետի երկարաձգման ծրագրի աշխատանքների իրականացման համար: | Ա. Գալստյան | Ատոմային էներգետիկայի վարչություն | օգոստոսի 3-րդ տասնօրյակ |
| 4/20 «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կսահմանվեն պահանջներ, որոնք կնախատեսեն փոքր հիդրոէլեկտրակայանների համար «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնությունների ժամկետի ավարտից հետո դրանց շահագործման նոր պայմաններ: | Ա.Գալստյան | Զարգացման վարչություն | սեպտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 5/21 «Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 12-ի N 580-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կիստակեցվեն լիազոր մարմին էներգամատակարարող կազմակերպության կողմից տեղեկատվություն ներկայացնելու գործընթացը, մասնավորապես, էներգատեղակայանքներում տեղի ունեցած պատահարների բնորոշումները և սահմանումները: | Լ. Շահվերդյան | Էներգետիկայի պետական տեսչություն | սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ |
| 6/22 «Նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման առանձնահատկությունների մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Ընդերքը նավթի և բնական գազի երկրաբանական ուսումնասիրությունների և արդյունահանման նպատակով իրավունքի տրամադրման գործընթացի կանոնակարգում, այդ թվում՝ արտադրանքի բաժանման պայմանների, կողմերի իրավունքների և պարտականությունների սահմանում, ՀՀ տարածքում նավթի ու բնական գազի | Ա. Գալստյան | Ընդերքի վարչություն | սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | երկրաբանական ուսումնասիրությունների համար նախատեսված պայմանական տարածքների ամրագրում | | | |
| | | | | |
| /23 «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Կպարզեցվի էներգատեղակայանքների գործարկման գործընթացը, մասնավորապես, կնվազեցվի պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի թիվը: | Լ. Շահվերդյան | Էներգետիկայի պետական տեսչություն | հոկտեմբերի 1-ին տասնօրյակ |
| 3/24 «Մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1438-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով ուժը կորցրած կճանաչվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի նոյեմբերի 8-ի N 1438-Ն որոշումը և կսահմանվեն մայրուղային գազատարների տեխնիկական շահագործման պահանջներ: | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ |
| 3/25 «Մայրուղային գազատարներում անվտանգության պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի N 119-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ուժը կորցրած կճանաչվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15 N 119-Ն որոշումը, և կսահմանվեն մայրուղային գազատարների անվտանգության պահանջները: | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | նոյեմբերի 3-րդ տասնօրյակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 0/26 «Փոքր հիդրոէլեկտրակայաններում տեղադրվող սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը | Նոր կառուցվող, վերակառուցվող և վերազինվող ՓՀԷԿ-ների լիցենզավորման փուլում կսահմանվեն փոքր հիդրոէլեկտրակայաններում տեղադրվող սարքավորումներին ներկայացվող տեխնիկական պահանջները՝ ելնելով միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքներից՝ ՓՀԷԿ-ներում հիդրոէներգետիկ ներուժն առավելագույնս արդյունավետ օգտագործելու նպատակով: | Ա.Գալստյան | Զարգացման վարչություն | դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ |

**Հավելված N 2**

# Ց Ա Ն Կ
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ

| Գերակա խնդիրները | Գերակա խնդրի լուծմանն ուղղվող քայլերը | Վերահսկողներ | Կատարողներ | Ընթացքի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1/5. Հայաստանում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման առաջին փուլի՝ նախագծային աշխատանքների իրականացման նախապատրաստում | - ՀՀ-ում նոր միջուկային էներգաբլոկի կառուցման ֆինանսավորման ապահովմանն ուղղված աշխատանքների իրականացում,<br><br>- Ընտրված հրապարակի անվտանգության գնահատման հաշվետվության մշակում և դրա համապատասխան փորձաքննության եզրակացության ապահովում | Ա. Գալստյան | Ատոմային էներգետիկայի վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |
| 1/6. Տարածաշրջանային ինտեգրացում | - Իրան-Հայաստան 400 կՎ լարման էլեկտրահաղորդման օդային գծի կառուցում | Ա. Սիմոնյան | Ներդրումային ծրագրերի և կապիտալ ծախսերի համակարգման վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |
| | - Վրաստան-Հայաստան տարանցիկ էներգափոխանակման վերաբերյալ համաձայնագրի կնքում | Ա. Գալստյան | Զարգացման վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |
| 3/7. Երկրաբանական տեղեկության հրապարակայնության ապա- | - «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ում առկա օգտակար | Կ. Ղահրամանյան | Ընդերքի վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| հովում | հանածոների հանքավայրերի և երևակումների անձնագրերի թվայնացում և թվայնացված երկրաբանական տեղեկության տեղադրում ինտերնետային կայքում | | | |
| 4/8. ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի N 1372-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների համակարգում | - Ծրագրի միջոցառումների իրականացման մոնիթորինգ, ծրագրի ընթացիկ և նպատակային ցուցանիշների համադրում և ծրագրի արդյունավետության գնահատում | Ա. Գալստյան<br>Ա. Սիմոնյան | Զարգացման վարչություն | Յուրաքանչյուր եռամսյակ |